

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻ ԼԺԿ-Ի ՈՒՍՈՒՑԻՉԱՆԵՐԻ ԿՈ.ՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ԳԻՏԱ-ՄԱՆԿԱՎԱՐՔԱԿԱՆ ԽՆԱՏԻՏՈՒՏ

Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱԱՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՄ ՓՈՐՁԸ

ԽՆԱՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՄԱՆԻ և ՎՐՅՈՍԿԱՆԻ

| Տպածէ է | Պետք է լինի |
|-------------------|-------------------|
| գախու | գախո |
| դուժողությունները | դուժողությունները |
| իրարամերձ | իրարամերձ |
| համեմոռում | համեմոռում |
| յ—կ | յա |
| 18—զ | նրան |
| թ—զ | դաստիաբակին |
| լե—ն | դասագլոբում |
| 18 | ունեցող |
| 19 | ունեցող |
| 26 | հողվածների |
| 33 | մեթոդիկայի |
| 6—դ | |

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՌ ԼԺԿ-Ի ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԴՈՐԾՄԱՆ
ԳԻՏԱ-ՄԱՆԿԱՎԱՐԱԿՈՒՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ապրիլ 1961 թ.

Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱԱՏԵԱՐԱԿՈՂԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՄ ՓՈՐՁԸ

A 24248
1156



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Փորձի փոխանակման կարգով տպագրում ենք Երևանի Ա. Գորկու անվան միջնակարգ դպրոցի վաստակավոր ուսուցիչ ընկ. Ե. Կարապետյանի դասղեկության աշխատանքի փորձը:

Ընկ. Կարապետյանը կարողացել է իր դաստիարակչական աշխատանքներում հասնել զգալի հաջողությունների, և համագումած մեջ, որ նրա փորձի ճշատարակումը անօգուտ չի լինի երիտասարդ ու սկսնակ դասառուների կամ դասղեկների համար:

Հնարավոր է, որ ընկ. Կարապետյանի այս նյութը իր դիմական կողմերով հանդերձ, պարունակի նայելու վիճելի հարցեց առ մտմենաներ: Այս պատճառով էլ անհրաժեշտ ենք դանում (նշել) որ այս նյութը տպագրվում է ոչ որպես հրահանգավորում, այլ որպես ուսուցիչ և դասղեկի աշխատանքի մի դրական փորձ:

ԳԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՄ ՓՈԲԶԸ

1.

Մ. Գորկու անվան միջնակադրգի դպրոցում աշխատանքի եմ անցել 1935 թվից: Այդ ժամանակ ես արդեն մանկավարժական աշխատանքի 4 տարվա փորձ ունեի:

Եմ դաստիարակությանը հանձնվեց Ձ-րդ «ա» դասարանը: Այդ դասարանում եմ պիտի ամանդեի մայրենի լեզու և թվաբանություն: Եմ և ուրիշների փորձից դիտեի, որ առաջին համարդակումն աշակերտների հետ, առաջին դասը, կամ զբուցը հակացական նշանակություն ունի: Հետուագա աշխատանքը հաջող կազմակերպելու համար:

Ես համոզված եի, որ դասավանդման ու դաստիարակչական աշխատանքի մեջ հաջողություն կոնճնամ միայն այն ժամանակ, եթք կհաջողի աշակերտների մեջ համակրանք առաջ բերել իմ նկատմամբ և վստահություն՝ դեպի իմ ուժերը:

Հենց ակվեից ես աշխատեցի պլանավորել դաստիարակչական աշխատանքս, որպեսզի պատճեարկանության ջնանդիպիմ, որպեսզի իմ յուրաքանչյուր ծեռնարկությունը նպատակատրված լինի՝ հաջորդը լրացնի նախորդին: Հասկանալի է, որ դաստիարակչական աշխատանքի առաջին ստարչա իմ պլանում ես առաջին հերթին մեծ տեղ պիտի տալի աշակերտների անհատավկան լնդուակությունների, նրանց բնակորության առանձին գծերի և ընտանեկան միջավայրի ուսումնասիրության հարցերին: Ես այդպես էլ կառուցեցի իմ աշխատանքի պլանը:

Մինչև դասերն սկսելը, ես ծանոթացա իմ դասարանի նախորդ դաստիեկի և դաստումների հետ. նրանցից նախնական տեղեկություններ հավաքեցի դասարանիս մասին ընդհանրապես և առանձին աշակերտների մասին՝ մատնավորապես: Ուսումնական տարվա առաջին օրն է. աշակերտությունը հավաքվել է

դպրոցի բակում: Ահա Հնչեց զանգը. բակը դատարկվեց, աշակերտությունը դասարաններումն է: Դիրեկտորն ինձ ներկայացրեց զասարանին: Ըստ առվորության դասարանում թիվին փափուց տարածվեց, երբ դիրեկտորը հայտնեց, որ այսուհետեւ նրանց հայոց լեզվի և թվաբանության դատաստոմ ու դասղեկը եւ եմ իմնելու: Ահա՛, մենակ եմ մնացիլ ես աշակերտների հետ: Անվանացուցակին ստուգելուց հետո շատ կարճ բացատրություն առվեցի հայոց լեզվից անհրաժեշտ գրենական ու դասական պիտույքներ ձեռք բերելու մասին և ուղարկի ականցի դասը:

Դասապլանով նախատեսնված նյութին անցած հաջող: Գասիվերջում հայտնեցի, որ դասերից հետո սպասեն ինձ: Առաջին նստարանին նստած երկու աշակերտի նշանակեցի հերթապահ և հայտնեցի այդ օրվա նրանց անելիքը: Միաժամանակ պատմիքնեցի, որ բոլոր աշակերտներին ընդմիջումների ժամանակ դուրս հրամիրեն դատարանից, պատրաստեն ջնջոցը, կամինը և հակեն դատարանի մաքրությանը: Պայմանավորվեցինք, որ բոլոր աշակերտները լսեն հերթապահներին:

Դասերից հետո բոլորն սպասում էին ինձ: Ես, նախ՝ լսեցի հերթապահների ինքորմացիան իմ սպած համանարարությունների կատարման մասին: Նրանք դանդատվեցին որոշ աշակերտներից, որոնք չեին լսել իրենց, մնացել էին դասարանում և զբանականի վրա խզրդել էին, վաղվզել դասարանում և այլն: Ես բացատրեցի հերթապահի գերի մասին, նրա իրավունքների ու աշակերտների վարքի մասին դպրոցում և դասամիջոցներին: Այնուհետեւ՝ թելադրեցի դասացուցակը և պատվիրեցի, որ արտադրեն օրագրերում: Պարտադրեցի, որ բոլորը ձեռք բերեն կամ կազմեն օրագրեր: Հայտնեցի, թե ինչ գրքեր են հարկավոր անցնելիք առարկաների համար և պատվիրեցի գնել: Ասացի, որ ամեն օր ստուգելու եմ, թե ով ինչպես է դաշիս դասահ՝ պատրա՞ստ, թե ոչ: Մեր դասարանի ոչ մի աշակերտ օրագրում «լատ» գնահատական չպիտի ունենա, — ասացի ես: Խիստ տոնով հանդիմանեցի այն աշակերտներին, որոնք հենց այդ օրը չեին ենթարկվել հերթապահներին և հայտնեցի, որ կրկնվելու դեպքում ես կհամոզվեմ, որ այդ աշակերտներն իմ դասարանի անկարդներն են և նրանց նկատմամբ այլ միջոցներ կդորձագրեմ: Հա-

ջորդ օրը ստովեցի տված պատվերների կատարումը. պարզեցի, որ բոլորը պատրաստ էին եկել դարրոց:

Բայցատրեցի, որ տանը ծնողների հետ յուրաքանչյուր աշակերտ պեսոք է կազմի օրվան ուժիւմ. ցուց տվեցի ձեր: Պահանջեցի դպրոց գալ մաքուր հազնված և անպարհան թաշկինակներով. ընտրեցի սանիւտարներ, տրոնք պարտավոր էին ամեն օր ստովել ընկերների մաքուրիցումը

Հայտնեցի միաժամանակ, որ ևս հաճախ կայցելեմ տները—ստովելու—թե տանն ինչպիս են աշխատում իրենք. «Ոետք է այնպիս անել,—տասցի նրանց,—որ Զեր ծնողները շգանդատվն ինձ: Ոետք է լավ սովորեք, որ ձեր մասին ևս կէ ձեր ծնողներին լավ կարծիք հայտնեմ»:

Հաջորդ ամսվամ մշակեցի դաստիանի, առց-միցման պայմանագիրը, որը կնքեցինք զուգընթաց Յ-ըդ «բ» դաստիանի հետ: Դրա հիման վրա աշակերտները կնքեցին նաև անհատական պայմանագրեր:

Այսպես, քայլ առ քայլ ևս կազմակերպում էի դաստիանական կուեկտիվը և նախապատրաստում նրանց միասնական աշխատանքի համար: Իմ զուգըները (դատերից հետո) տեսում էին 10—15 դոպե: Խիստ վսուափում էի ընդհանուր, վերացական, երկար ու ձանձրացնող զուգըներից. աշխատում էի ամեն անգամ՝ գործնական—կազմակերպչական մի ձեռնարկում անել (հերթապահի նշանակում, պայմանագրի կնքում, ինչպես, պատքառել տված դասը, ուժիւմի մշակում և այլն):

Իմ տված առաջադրանքների կատարման ախտեմատիկ հոգեկողության, խստապահանջության հիշեանքով ես կարծ ժամանակամիջոցում դաստիանն ապահովեցի օրագրերով, դաստիանու գրենական պիտույքներով և այլն: Իմ աշակերտների մեջ ամրացավ ամեն օր դամերը պատրաստած դպրոց գալու սովորությունը:

Սկզբանական շրջանում ևս աշխատում էի պրեթե բոլոր դրսամիջոցներին լինել իմ դաստիանում կամ դպրոց. մասնակցում էի աշակերտների որոշ խաղերին:

Խստապահանջությունն ու աիրավիր վերաբերմունքս շարունակ շափակորում էի, որպեսզի շափից դուրս խրախուսանքից

աշակերտները երես շառնեին, ինչպիս և հետևում էի, որ փառու-
թյանս մեջ շանցնեի կորրեկտության սահմանը:

Ես ուզագիր լսում և ամենատևանք չեի թողնում երեխաների
գանգատներն ու պահանջնելիք. շտագ ընթացք էի տալիս: Շու-
տով նկատեցի, որ որոշ աշակերտներ, մանավանդ աղջիկ երե-
խաներն ամեն չնշին բանի համար վազում էին ինձ մոտ գան-
գատվելու: Նրանցից ոմանք շատ էին սիրում, որ ես ընկերների
ներկայությամբ, կամ առանձին, «Հանցավորներին» հանդիմանիմ:

Սրբանք հաճախ գանգատվում էին, ին այսինչը գրիչս փախց-
րեց, ինձ խիեց, հրեց և այն:

Ես ինձ հաշիվ էի տալիս, որ ամեն մի չնշին բանի համար
չի կարելի աշակերտին նկատողություն անել, հակառակ դեպ-
քում նկատողությունն ու դիտողությունը սովորական երևույթ կը-
դառնան և կկորցնեն իրենց ազգեցությունը: Դրա համար էլ աշ-
խատում էի, նախքան «Հանցավորին» կանչելը, տվյալ գանգատի
մեջ որոնել հանցամքին չափը և ապա միայն միջոցների դիմել:
Հաճախ բողոքողներին բացատրում էի, որ նախքան ինձ մոտ գան-
գատի գալը պետք է աշխատել հաշտվել ընկերոց հետ, չլիրու-
վորվել ամեն Ֆի չնշին բանի համար. հարկաւոր է նաև ընկերու-
ջը ներել իմանալ. կարելի է գանգատվել միայն լուրջ դեպքերում:

Երեխաները, մանավանդ փոքր հասակից, շատ են սիրում
կատարել ուսուցչի հանձնարարությունները: Նրանց այդ զիծն
օգտագործելով, ես հաճախ հանձնարարություն էի անում այն
աշակերտներին, որոնք հենց առաջին օրվանից յաւում էին տվիկ
շարության որոշ նշաններ: Ես նպաստել ունեի այլպիսով մտեր-
մություն ստեղծել իմ և նրանց միջև, որպեսզի հետագայում տ-
վելի դպուրին լիներ նրանց վրա ներփործելը:

Ինձ համար պարզ էր նաև այն, որ միայն իմ ջանքերով
ես չեի կարող դեկավարել երեխաների ողջ դաստիարակչական
աշխատանքը, կազմակերպել երեխաների ազգատ ժամանցը, ար-
ուադարձուցական աշխատանքը, որը մեծ նշանակություն ունի: Ե-
րեխաներին դրան բացասական ազգեցությունից կտրելու, ման-
կական կուեկտիվի աշխատանքը կազմակերպելու տեսակետից:
Հենց սկզբից ես կապվեցի պիտներական ջոկվարի հետ, և միա-
սին պլանավորեցինք պիտներական ջոկվարի աշխատանքը:

Առաջին հավաքույթին աշակերտները բաժանվել էին օղակ-ների: Օղակներն առաջադրանք ստացան փնճուրույն ստեղծագործական որևէ բան պատրաստել, հետագա զոկատային հավաքույթին երուամ հանդես գալ և ցուցադրել առանձին աշակերտների ստեղծագործությունը՝ նկար, ձեռագործ, պար, երգ, նվագ, արտասանություն և այլն:

Հետեւալ հավաքույթին ես ներկա էի: Պետք է խոստովանել, որ այդ հավաքույթը շատ հետաքրքիր անցավ, որովհետև օղակները պատրաստել էին միմյանցից խիստ գաղտնի ձևով և մրցման կարգով յուրաքանչյուրն աշխատում էր ավելի պատրաստված հանդես գալ ընկերների առաջ:

Երեխանները ցուցադրեցին իրենց ստեղծագործությունները (նկարներ, մողելներ, ձեռագործներ, օղակներով բուրդ կամ մարզանք՝ և այլն):

Հետաքրքիր հավաքույթների կազմակերպումը երեխաններ կապում է կողեկտիվի հետ: Այդ հավաքույթները պետք է օճանակագում երեխայի ստեղծագործական ընդունակությունների դարպացմանը, բավարարեն նրանց խաղին, զվարճության պահանջները:

Հիշյալ հավաքույթում ես շատ կողմերով ավելի մտադիլից ճանաչեցի աշակերտներին:

Ծնողները հաճախ գախուին դպրոց, տեսնուում ինձ հետ, տեղյակ պահում երեխայի տնային աշխատանքներին և տեղեկություն ստանում ինձնից նրա դպրոցական աշխատանքի և մարքմասին:

Ուս, տարվա երկրորդ ամսակց ես սկսեցի այցելել աշակերտների տները:

Հաճախ ծնողները պատմում էին, թե ինչպես երեխանները տանը շարունակ իմ մասին են խոսում. «Ոգևորված պատմում են Ձեզանից լսածները. նրանց խոսակցության նյութը դուք եք», — ասում էին նրանք: Այդ ինձ ոգևորում էր, որովհետեւ նկատում էի, որ արդեն նվաճում եմ երեխանների սերն ու վստահությունը: Իսկ դա, ըստ իս, գլխավոր պայմանն է դաստիարակչական աշխատանքը լավ կազմակերպելու և հաջող կատարելու համար:

Դաստիվանդման ընթացքում էլ աշխատում էի ամեն կերպ հետաքրքրություն առաջացնել դեպի առարկան: Անցնելիք նյութի (հողվածի) կապակցությամբ հաղորդում էի լրացուցիչ տեղեկություններ, պատմում էրիխաների հետաքրքրությունը բավարարող պատմվածքներ կամ էպիգոդներ: Այսպես օրինակ՝ ընկ. էնինի մանկության մատին հողվածն անցնելիս, էրիխաները հետաքրքրում էին նաև նրա կյանքի հետագա դեպքերը, և ես պատմում էի որոշ էպիգոդներ: Այս ձևերը գործադրել եմ հետազա տարիներում ևս, ինչպես և՝ Հիմա:

Ընդհանուր գծերով այս է ահա այն նախապատրաստական աշխատանքը, որով ևս կանցի դաստիարակչական աշխատանքը ինձ հանձնված գասարանում:

Անհրաժեշտ է այժմ թեկուղ համառուտ ձևով նշել այն հարցերը, որոնք կազմել են իմ հետագա դաստիարակչական աշխատանքը:

2.

Ես իմ աշխատանքի ընթացքում մեծ ուշադրություն եմ նվիրել դիսցիպիլինային: Զգուել եմ աշակերտներին մեջ ամրացնել գիտակցական վիճաբերմանք դեպի գործը, մշակել նրանց մեջ կուտակական վարքի հատկությունները:

Այս նպատակով ես դաստվանդման կամ դաստիարակչական այլ աշխատանքների ընթացքում ուշի ուղղվ հետեւում էի յուրաքանչյուր աշակերտի: ուսումնասիրում նրա վերաբերմունքը դեպի ընկերը, դեպի աշխատանքը (դասը), դեպի նկարագրված հերոսի գործորությունները, կամ դրացից ժամանակ նշած դեպքերը և այլն: Այսուհետեւ սիստեմատիկաբար այցելում էի աշակերտների ուները, հրավիրում ծնողվական ժողովներ, անհատական զրույցներ ունենալու թի ծնողների և թի աշակերտների հետ, ուսումնասիրում էի, թի դպրոցից դուրս աշակերտներս ինչպիսի ընկերների հետ են ժամանակ անցկացնում և այլն: Այդ հանապարհով պարզվում էր, թի կան ծնողներ, որոնք և լավ դաստիարակ են, կան ծնողներ էլ, վորոնք անհրաժեշտ կրթություն չունեն և չեն կարողանում ճիշտ կազմակերպել ընտանեկան դաստիարակության գործը: Այսպիսիներին ցուց էի տալիս անհրաժեշտ օգնություն:

Ի՞նչ Մհջոցներ եմ գործադրել իւր ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԿԱՐԳԱ-
ՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ա) Նախ բոք մշակված, պլանավորված գրուցներ դասարանա-
կան կողեկտիվում՝ 1. աշխատանքի մեջ կարդապահության նշա-
նակության մասին, 2. դպրոցական կարդապահության սկզբունք-
ների մասին մեր և կապիտալիստական երկրներով, կարդած
երկու իրարամերձ երկրների դպրոցական նպատակների հետ.
3. Կարմիր Բանակի և բոլշևիկյան պարտիայի շարքերի կարդա-
պահության մասին, որպես դժուցիպիլնայի ամենակատարյալ
ձեփ, ամենաբարձր օրինակի. 4. այն մասին, որ կարդապահու-
թյունը հեռուի և մեծ մարդկանց բնորոշ գիծն է՝ Անդինի, Ստա-
լինի, Չապակի, Խովովովի և այլն.

բ) աճահատական գրուցներ, կամ դրուց մի քանի հոգու
հետ գրոսաների ժամանակ կամ այլ առիթով.

գ) տուժի որոշ տեսակների կործագրում (Հանդիմանություն,
Կատուղյուն—առանձին կամ կործեկտիվի առաջ, դիտողու-
թյուն օրագրում, հարցի քննությունը դասարանական ժողովում
և այլն).

դ) Հոդվածների և գեղարվեստական հատվածների դնթերցա-
նություն.

ե) սոցմրցման կազմակերպում.

զ) էքսկուպահաների և զբոսանքների կազմակերպում դեպի
թանգարանները, քաղաքի շրջակայքը և ավելի հեռու տեղեր.

է) Հասարակական աշխատանքում ներգրավելը. աշակերտի
անհատական ստեղծագործական աշխատանքի կազմակերպումը
և այլն:

Վերոհիշյալ միջոցառությունները գործադրելիս ես աշխատում
էի գրուցը հագեցնել կոնկրետ փաստերով, վառ ու վեճուքանի
օրինակներով: Այդ օրինակները վերցնում էի մասնություն հրատա-
րակված հոդվածներից, մարդարիզմի կլասիկների աշխատություն-
ներից, բուժութարկան դպրոցի մասին գրականության մեջ նշանակած
փաստերից և այլն:

Երեխանները ոչ միայն այդպիսի գրուցներ լսում են մեծ ու-
շագրությունը, այլև հարցեր են տալիս, նույնիսկ լրացնում գր-
ուցն իրենց լսած կամ կարդացած փաստերով: Այս հանգա-

մանքը ցուց է տալիս, որ աշակերտները զրուցն ըմբռնում, գիտակյում են, և նրանց մեջ մշակվում է գիտակյական վերաբերմունք դեպի կաթուալահության հարցը:

Զբոսանքներն ու չեսկուբախմները, կինո դժուամները, երեկոների կազմակերպումը մեծ չափով նպաստում են աշակերտների մեջ ընկերության և բնավորության լավ գծերի զարգացմանը:

Այնպես չափաբար պատկերացնել, թե նշանակ միջոցառումները նույնությամբ կրկնվել են ամեն տարի: Զրուցը 3-րդ և 4-րդ դասարաններում կազմակերպում էի ավելի մատչելի և համառոտ քան հաջորդ դասարաններում, քանի որ միշտ նկատի էի առնում երեխայի մտավոր ու ֆիզիկական գարգացման աստիճանը:

Ընկեր կենինի մասին զրուց եմ կազմակերպել և՛ 3-րդ, և՛ 4-րդ, և՛ հաջորդ դասարաններում: Եթե 3-րդ դասարանում ավելի մեծ ուշադրություն էի գարձնում իլիչի մանկական ու կարողական առաջին տարիների մասին հայտնի կենսագրակիան ու նկարագրական նյութերի վրա, ապա՝ հաջորդ տարիներին զրուցն ընդգրկում էր ընկ. կենինի երիտասարդական ու ոնկոլուցիոն գործունեության շրջանը: Ընկ. կենինի և ընկ. Ստալինի կյանքը համեմտում էի կոմունիզմի մեծ ուսուցիչների — Մաքքսի և էնկելադի գործունեության հետ, ցուց տալիս նրանց գործունեության նմաս կուշմերը: Երեխաներն ուղարկի հրաժանում էին իմանալով Մաքքսի և էնկելադի մտերքության, փոխադարձ վստահության և մհացանց օղնելու, թշնամու նկատմամբ նրանց ունեցած անհաշության, անողոք լինելու մասին, նրանց մտերիմ նամակադրութայն, :իրու մասին դեպի ընտանիքն ու երեխաները:

Աշակերտներու տեսմուամ էին նույնապիսի գծեր նաև ընկ. ընկ. կենինի, Ստալինի և Գորկու մեջ, որով և շտեմանված չափով ավելանուած չը նրանց հետաքրքրությունը դեպի մեծ մարդկանց կյանքն ու գործունեությունը: Զրուցից հետո աշակերտները համար իննորում էին առաջնորդների մասին իրենց գրքեր տալ կարգություն:

Դասավանդման ընթացքում և յուրաքանչյուր այլ առիթով ես աշխատում էի սոր զարթեցնել երեխաների մեջ դեպի գիրքը: Այդ ինձ հաջորդվում էր թե՛ հիշյալ զրուցների, թե՛ պեղարփեստական ընթերցանության միջոցով և թե նշանաւոր գրողների ստեղծա-

գործություններից հատվածները պատմելով, հերոսներին օրինակ բերելով և ալլն:

Եթեխաների Թետաքրքրությունը ըստվարաբելու համար, բայց ուսումնական ծրագրով նախառուեմնված նյութերից, հանձնարարում էի համապատասխան գրքեր կաֆրալ, կատարում էի հաշվառում, թե որքանուվ են հասկացել կարդացածը, վճռ գժվարության են հանդիպել, բացատրում էի անհասկանալի բառերն ուղարձվածքները :

Չնայած այդ միջոցառումներին, երբեմն իմ դասարանի առանձին աշխակերտներ թույլ էին տալիս այնպիսի արտաք, որի ժամանակին չկանխելը կարող էր ծանր Թետևանքներ ունենալ թէ՝ այդ աշակերտի, և թի՛ ամբողջ դասարանի վրա:

Դեռևս ուսման 5-րդ ստարում, նկատվեց մի վատ երևույթ՝ դարձվածքները:

Աշակերտութի Հ-ն հաճախ ընդհարվում էր ընկերների հետ, խոսվում և աշխատում մյուսների մեջ էլ կողմնակիցներ պահնել: Որոշ աշակերտներ նրանից գանգատվում էին և ասում, որ նա բանբաստանքներով է զբաղվում, վիրավորում է ընկերներին և ալլն:

Խոսվենությունը կենցաղային երևույթ է, ուստի նրա արձատները պետք է փնտռել ընտանիքում—շրջապատում: Ուստամասիրությունը ցուց տվեց, որ Հ-ի ընտանեկան միջավայրը այնքան էր ցավ չէ: Նրա մոր և հարեւանների մեջ հաճախ վիճեր են ծագել. Գրեխայի ներկայությամբ ծնողները հարեւաններին հաճախ բամբասել, վլատարանել են. մանավանդ մայրը չի կարողացել հարեւանների հաջող հետ և ցնցին առիթներով ընդհարվել: Այրանց հետ երեխան կորչված է եղել կորեկտիվից (նաև մնացել էր նույն դասարանում, այս դասադրանում նա նոր աշակերտ էր): Կցելելով նրանց տունը, ևս զրուց ունեցած Ճ-ի ծնողների հետ և պահանջեցի, որ վերջ տան այդ աղմկաբարությանը, խոսվությամբ հարեւանների հետ, ամեն կերպ աշխատեն հաշտ ու հարդարից լինել և ալլն: Պատմեցի, թե ինչ ալգորիթմություն է ունեցել նրանց այդ հարաբերությունները երեխայի վրա:

Այդ պահանջը նրանք ընդունեցին, որովհետև ինձ հայտնի փաստերն իրենք չժխտեցին և նույնիսկ խիստ ազդվեցին երբ իմա-

ցան, որ այդ փաստերն ինձ հայտնի են, ծս աշակերտութիւ Հ.-ին հասարակական աշխատանքի ներգրավեցի, տեղափորեցի պիոներական պալատի ինքնագործ խմբակում (պարերի), նրան ամրացրի պիոներ Լենալի օղակին, որի ազդեցությունը մեծ էր մանավանդ աշակերտութիների վրա: Հ.-ն որոշ առարկաներից հետ էր մնում — կազմակերպեցի ընկերական օգնություն: Ամեն տեսակի պարման ստեղծում էր, որ շփումը մյուս ընկերների հետ հաճախակի լինի, նա կապվի կոլեկտիվի հետ, մասնակից լինի իր գանգրանական գլուխարվիր աշխատանքներին: Համախ կանչում և հատուկ սուազադրանք էի տալիս: Զոկատային հավաքությներին պիոներները պահանջում էին, որ նա պարի, մասնակից իրենց խաղերին: Նրա թերությունների նկատմամբ խիստ էի և պահանջում էի, որ նա մոտ լինի հատկապես նրանց, ովքեր գանգատվել էին նրանից. այդպես էի անում, որպեսզի Հ.-ի շուրջը եղած կամկածները փարատվեն: Նրա պայմանագրում հատուկ կետ կար՝ ընկերների հետ կորեկտ լինել և կուլտուրական վերաբերմունք ունենալ: Նա շարունակ զգում էր իմ և ընկերների հոկողությունը իր վրա և մեր պահանջն այդ թերությունները վերացնելու նկատմամբ:

Եվ այսպես՝ հաճախակի տնային այցելությունները, ծնողների հետ սերտ կապը, երեխային հասարակական աշխատանքի ներգրավելու ու դասարանական կոլեկտիվի ազդեցությունն ուղղեցին աշակերտութիւ Հ.-ին: Նա այժմ այլևս չի խուսվում և կապված է ընկերների հետ, որոնք իրենց հերթին հարգանքով են վերաբերվում գեղագիտութիւնը նրանից անդամների հետ:

Ուսման 6-րդ տարում տեղի ունեցավ մի այլ, ավելի լուրջ դեպք:

Ուսման գերազանցիկ լենան դասամիջոցին արտասվելով ներկայացավ ինձ և հանձնեց պատառութված մի թերթ («Պ. Կանչ»): Ալդ համարում տպված էր նրա նկարը, որպես ուսման առաջավորի: Դասարանի մի քանի աշակերտներ նրա նկարը պատուել և դիմքըն ալլանդակելով ծաղրի էին ենթարկել: Լենայի հուզմունքը և վերավորանքը լուրջ պատճառ ուներ: Պարզվեց, որ այդ քայլը կատարել են աշակերտներ՝ Մ. Մ.-ն, Ա. Ա.-ն և ն. Մ.-ն (վերջինիս գըլխավորությամբ): Աշակերտ ն. Մ.-ը նույնպես սկզբից շի եղել այդ դասարանում: Նա եկել էր լենինականից: Նա կենցալային հարցերում ավելի հասունացած էր, թեև հասակակից էր մյուս ընկերներին:

Իմ ուստիմնամիրությունը ցույց տվեց, որ նա խիստ կամակոր է, ընտանիքում նրան չափից դուրս երես են տվել, բոլորովին չի սիրում իրենից փոքր քրոջը, որին շարունակ ծեծում է: Սակայն նա ունի և դրական գծեր— սիրում է ընկերական միջավայր, հյուրաժամկեր է: Դեպքին իրազեկ լինելուց հետո ես անմիջապես կանչեցի հանցավորներին և բացատրություն պահանջեցի: Սկզբում արդարացան, թե միայն իրենք չեն պատռել թերթը, մյուսներն էլ են արել, թե իրենք վիրավորելու նպատակով չեն արել այդ բանը: Իմ հարցին, թե՝ ո՞վ սկսեց առաջինը, ոչ ոք չպատասխանեց, լուր էին: Հարցը կրկնեցի: Դարձալ լուսնություն: Ես խիստ բարկացած տոնով հայտարարեցի, որ հանցանքը թագանելու համար, սովորական մամուլի և ընկերուց նկատմամբ խովիգանական արարք թույլ տալու համար հարցը փոխադրելու եմ մանկավարժական խորհուրդ և պահանջելու, որ հանցավորին խիստ պատժի ենթարկեն: Ասացի, որ զասարան շմանեն, մինչեւ գիրեկառից կարգադրություն վիճի: Ուզում էի դուքս զնալ, երբ Մ.-յան Մ.-ն, որն ըստ երևությին ավելի էր վախենում հանցանքը թագանելու վատ հետեւաքից, մի ակնարկ նետեց ընկերների վրա, համարձակվեց խախտել «ընկերական խոստումը» և զրեթե արտասվելով ասաց, որ ինքը չեր ուզում անել այդ քայլը: «Մարտունին սովորեցրեց, ասաց՝ եկեք Լենային զղայնացնենք: Մենք էլ կատակելու համար այդպես արինք: «Ճիշտ է՝ ասում», — դիմում եմ Սպարտակին: «Այո՛»— պատասխանում է նա:

«Այնուամենայնիվ ես ձեզ չեմ արդարացնում, — ասացի նրանց, — որովհետև դուք մասնակցել եք այդ անկարգությանը և թագնում էիք ձեր ընկերոջ հանցանքը, դրա համար դուք կտանաք ձեր պատիժը»:

«Քնկե՛ր Կարապետայն, խնդրում ենք ներեք այս անգամ, այլև չենք անի, ներողություն ենք խնդրում»— արտասվելով ասաց Մ.-ը:

«Չեզ ներելու կամ պատժելու մասին կհայտարարվի դասարանում, առայժմ կարող եք զնալ»— ասացի ես:

Երկուակին ուղարկեցի դասարան, իսկ Մարտունուն պահեցի: Նա ընդունեց, որ ինքը չի գիտակցել, որ սխալ է արել, երբ սովորեցրել է նաև մյուս ընկերներին, այդ պատճառով էլ ներողություն է խնդրում: Սակայն ես զգացի, որ նա շատ բան ճիշտ շասաց իր և Լենայի հարաբերությունների մասին, ուստի նրան թույլ շտվի դասարան գնալ և ուղարկեցի ծնողին կանչելու: Նույն օրը ես Լե-

նայից իմացա, որ իրենց խոռվելու պատճառը եղել է այն, որ իրենց տանը կազմակերպված երեկութին լենան Մարտունուն էլ է հրավիրել, բայց նա չի գնացել: Լենան վիրավորվել է և դադարել նախկին մտերմությունը շարունակել նրա հետ:

Մարտունին ակադեմիական առաջադիմությամբ և վարքով գասարանում չեր փալում, թեև ընդունակ երեխա էր: Բայց նա մհձ կարծիք ուներ իր մասին. Հաճախ ֆիզիկական ճնշում էր գործադրում ընկեր-ընկերութիների վրա: Պարզվեց, որ ծովություն է արել, տեսրեր չի պահել, տանը գասերով քիչ է պարապել, եկել է գասարան, ընկերներից արտագրել լուծված խնդիրները և այն: Լենան հրաժարվել է այդ ձևի օգնություն ցուց տալուց: Այս ևս հանդիսացել է նրանց իրարից խոռվելու պատճառներից մեկը: Այնուհետև ներսիսյանը ցանկացել է որևէ կերպ զայրացնել լենային և ահա դիմել է այդ միջոցին:

Նա կարողացել է իր աղքեցության տակ գցել նաև մյուս տղաներին:

Նա նույնիսկ տրամադրել էր մի քանիսին, որ դաս պատասխանելիս լենային խանգարեն, որպեսզի նա գերազանց շտանա:

Դիրեկտորի մոտ, ծնողների ներկայությամբ նորից զրոյց ունեցանք լենայի և ներսիսյանի հետ:

Մեր հարցին, թե՝ «ինչո՞ւ եք միմյանցից խոռվել», լենան պատասխանեց՝ «Ճիշտ է, ես նրանից վիրավորվել եմ, որ արհամարել է իմ հրավերը, բայց չեմ խոռվել: Այն օրից երբ արտագրելու համար տեսրը չտվի, նաև ացնաւ չի խոսում ինձ հետ ևիր վարմունքը շարունակում է մինչև հիմա: Ես ոչ մի վատ բան չեմ արել նրան: Իսկ նա կազմակերպել է տղաներին և դասարանի առաջ, նույնիսկ մյուս դասարաններում էլ, նկարս ալլանդակում ու ծաղրի է ենթարկում:

Ներսիսյանը գլուխը կախում է, չի խոսում: Երբ նորից գիրեկտորը դիմեց նրան, նա պատասխանեց՝ «Ես լենայի հետ խոսելու առիթ չեմ ունեցել, ինչ վերաբերում է այսօրվա դեպքին, ապա հսչեի կարծում, թե նա կվիրավորվի, քանի որ մենք միայն կատակելու նպատակով ենք արել: Եթե իմանայի այդքան կվիրավորվի, չեի անխ»:

— Ուրեմն, դու չե՞ս ընդունում, որ քո արարը վիրավորանք է լենայի համար, — ասաց դիրեկտորը:

— Վիրավորանք է, բայց ոչ այնքան մեծ:
— Դու ինչ պատճառով վիրավորվեցիր Լենայից:
— Մի անգամ տեսր եմ խնդրել՝ չի տվել: Էլ ի՞նչ ընկեր է, որ
չպիտի օժանդակի իր ընկերներին:

— Դու ինչո՞ւ տեսրեր չես պահում:

Այս զբուցի ընթացքում ի վերջո Ներսիսյանը համոզվեց, որ
առաջադիմելու համար իր ընտրած ուղին սխալ է, որ իրոք իր վե-
րաբերմունքն ընկերների նկատմամբ կոպիտ է եղել: Նա մեր ներ-
կայությամբ ներզություն խնդրեց Լենայից: Լենան ընդունեց, որ
ինքն էլ որոշ մեծամտություն ունեցել է ուրիշ ընկերների նկատ-
մամբ, որոշ խտրություն է զրել ընկերների մեջ և խոստացավ վե-
րացնել այդ թերությունները:

Մենք պարտադրեցինք, որ երկուսն էլ դասարանական ժողո-
վում ելույթ ունենան և խոսեն իրենց թերությունների մասին:

Հրավիրվեց դասարանական ժողով: Այդ ժողովում ընթերցվեց
զիրեկտորի հրամանն այդ դեպքի հանցավորների մասին. նկատո-
վություն էր արվում Ներսիսյանին — որպես գործը նախաձեռնողի և
զգուշացվում մյուսներին՝ որպես անկարգության մասնակիցների: Ժողովում
ընթերցվեց նաև զիրեկտորի մյուս հրամանը՝ փոխանցիկ
դրոշ սահմանելու և այն շահելու պայմանների մասին :

Ես և ուսմասվարն այն համոզմունքը հայտնեցինք, որ մեր դա-
սարանը լավ աշխատելու դեպքում անպայման կշահի փոխանցիկ
դրոշը: Աշակերտները ելույթ ունեցան, սկզբում քաշվելով, բայց հե-
տո ավելի աշխուժ կերպով սկսեցին քննադատել միմյանց թերու-
թյունները:

Ելույթ ունեցավ նաև Ներսիսյանը, որը թեև քաշվելով, այնու-
ամենայնիվ գտառապարտելով իր կատարած քայլը, խոստացավ այլ-
ու հույ. Հենել ընկերներից արտազրելու վրա, տանը դասերը յավ
պատրաստել և վերացնել իր վատ գնահատականները: Նա խոս-
տացավ ընկերների հետ լինել կորրեկտ և պայքարել փոխանցիկի
համար:

«Մեր լավ աշխատանքով կնվաճենք փոխանցիկը և կփոխենք
ստեղծված վատ կարծիքը մեր դասարանի մասին, որ կազմել են
մյուս դասարանները մեր անփութության պատճառով» — վերցաց-
րեց նա: Ելույթ ունեցավ նաև Լենան. նշելով դասարանի թերու-
թյունները, նա պահանջեց ուժեղացնել ընկերական օդնությունը:

Դասարանը որոշեց, ինչ պնով էլ լինի, նվաճել փոխանցիկը, ուժեղաց՝ ուղաց ոսցմբումը դասարանում և պիտի ջոկատում: Պիտի բական օղակները մրցման մեջ մտան իրար հետ, ամեն մի աշակերտ լրացուցիլ պարտավորություն վերցրեց:

Ինձ համար պարզ էր, որ անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել դասարանի խախտված ընկերական սպայկան վերականգնելու վեա. որ միասնական կոլեկտիվ աշխատանքից և կախված նետագա հաջողությունը: Այդ գեղքից հետո ավելի հաճախ էի կազմակերպում կոլեկտիվ կինոդիտումներ ու թանգարանների այցելությունները: Իմ առաջարկով ժողովը Մարտունուն ընտրեց «ՄՕՊՐ»-ի լիազոր, կենացին թերթի բաժանորդագրության լիազոր:

Հասարակական աշխատանքի այս պարտավորություններով սրանք, ինչպես և մյուսները, հաճախ հարկադրված էին դիմել միմյանց, կապվել իրար հետ: Դրանով էլ աստիճանաբար վերացակ նրանց միջև փոխադարձ անվատահությունն ու խորթությունը:

Կնքված սոցմրցման պայմանագիրը հաճախ էինք ստուգում և դուռը ժողովի կամ պիտունի ջոկատի հավաքույթի քննությանը:

Բայց միայն դասարանի ներսում աշխատանք կազմակերպելով հնարավոր չէր իհարկե վերացնել կենցաղային հիշյալ վատ երեւությունը: Անհրաժեշտ էր այդ ուղղությամբ աշխատանք կազմակերպել նաև ծնողների մեջ:

Ես հրավիրեցի ծնողական ժողովներ, և կազմակերպեցի զրուցներ ու զեկուցումներ այդ խնդիրների շուրջը: Այսպիսով, դասարանական կոլեկտիվի աշխատանքի ճիշտ կազմակերպումով, աշակերտներին միասնական աշխատանքի լծելով, որոշումների կատարման սիստեմատիկ ստուգմամբ ու կոնտրոլի միջոցով, ծնողների հետ սերտ կապ ստեղծելով կարողացա դասարանի աշխատանքը նորից նորմալ հումքի մեջ դնել: Բարձրացնել ուսմուն որակը և կարգապահությունը: Դպրոցի գիրեհեցիան լավ աշխատանքի համար հրամանով շնորհակալություն հայտնեց դաստիրակին և դասարանին:

Դրանից հետո իմ դասարանում սուր բնույթի անկարգության դեպքեր ալլեւ չեն նկատվել: Ուսուցիչների կողմից հաճախ լսվել են դանագատներ, թե այսինչ աշակերտը դասի ժամանակ խոսում է, զբաղեցնում ընկերներին, ցրում դասարանի ուշադրությունը» և այլք:

Ուսումնապիրելով այդ կարգի անկարգության գեպքերը, պարզվում է, որ զրանից մեծ մասի պատճառն այն է, որ որոշ աշակերտներ իրենց հետ չեն բերում բոլոր անհրաժեշտ դասական և դրենական պիտույքները, դասի ժամանակ օգտվում են ուղիղներից, որի պատճառով առաջ է գալիս ավելորդ շարժում, փսխոց, թյուրիմացություն և այլն:

Նմանօրինակ թերությունների վերացումն անհամեմատ հետ էր: Դեռ առաջին տարվանից ես խստորեն հետևում էի, որ աշակերտները դասի գան բոլոր անհրաժեշտ պարագաներով: Ծնողներին պարտադրում էի ձեռք բերել բոլոր անհրաժեշտ պարագաները: Ժամանարարում էի, որ ամեն անգամ ծնողներն ստուգեն թի դասացուցակի համաձայն երեխան բերում է արդյոք բոլոր անհրաժեշտ պարագաները: Պատահել է գեպք, երբ ստուգումը ցուց է տվել, որ աշակերտը չի բերել պահանջված պիտույքները, ես նրան սուն եմ ուղարկել զրկելով դասից, որպես անպարտաճանաշի և դասղեկի հանձնարարությունը չկատարողի: Կրկնվելու գեպքում արել եմ նկատողություն ու կցել նրա անձնական գործին: Աշակերտը դրանից որոշ շափով տուժել է, բայց այլևս չի շարունակել:

Դժբախտաբար ուսուցիչներ կան, որոնք իրենց նշանակած գնահատականները խիստ գաղտնի են պահում և չեն նշանակում ոչ միայն օրագրում, այլև դասամատյանում: Այդ ուսուցիչներն անկարգություն նկատելիս հարցերով անակնկալի են բերում աշակերախն և չպատասխանելու գեպքում, որպես պատիժ նշանակում են «վատ» գնահատական: Պատահական չէ, որ քառորդի վերջում այդպիսի ուսուցիչները օրագրում և դասամատյանում գնահատականների հաշվառում չունենալով ստիպված են լինում ձենվել միայն հիշողության վրա, գնահատական հնարել, որը շատ գեպքում չի համապատասխանում իրականությանը, չի արտահայտում աշակերտի գիտելիքների ձիւտ պատկերը: Դրանից ել առաջ են կալիս՝ գժգոհություն, անկարգություններ, լարով ուսուցի և աշակերտի միջև և այլն:

Անկարգության այլ տեսակների պատճառը դրսի վատ ընկերական միջավայրի ազդեցությունն է: Այդ սկատի ունենալով

Ես շարունակ աշխատել եմ լավ ուսումնասիրել իմ աշակերտների ընկերական շրջապատը և դասարանական Կողեկտիվն այնպէս կազմակերպել, որ երեխաներն ավելի շատ շփում ունենան իրենց դասընկերների հետ: Դիտողությունը ցույց է տվել, որ հսկողությունից գուրս գտնվող երեխաների աղղեցության տակ են ընկնում այն աշակերտները, որոնք զբաղմունք և ըստականություն չեն գտնում դասարանական կողեկտիվում, պիոներական ջոկատում, դպրոցում: Այդ նկատի ունենալով, ես պիոներ ջոկատի հետ միասին խելացիորեն կազմակերպել եմ աշակերտների հանգիստն ու զվարճակիքները, կազմակերպել եմ նրանց կինո ու թատրոն հաճախելը, հետաքրքիր երեկությներին մասնակցելը, որտեղ մեծ տեղ է տրվել երեխաների ստեղծագործական ինֆորմացիան ելույթներին. Հաշվի ենք առել երեխաների դանկությունները խաղերի ու հանդստի կազմակերպման հարցում և պահանջուրված կերպով կենսագործել այն:

Այս մի կողմից: Մյուս կողմից էլ փորձը ցույց է տվել, որ դրսի վատ աղղեցությանն են ենթարկվում մեծ մասամբ այն երեխաները, որոնք կապված չեն զրբի հետ և քիչ են իշարդում: Իմ դասարանի աշակերտներին զրբի հետ կապիկու ուղղությամբ նույնպես ցանկալի հաջողության եմ հասել: Այդ գործում մեծ դեր է խաղացել արտադասարանային ընթերցանությունը, որը սիստեմատիկորեն կազմակերպել եմ դասարանի աշակերտների համար: Դասարանում զետեղված կլասիկ հեղինակների գործերն ամեցնելիս երբ չիշատակում էին նաև նրանց մյուս գործերի մասին, երեխաներն ուզում էին այնպայման այդ գրվածքներին էլ ծանոթանալ: Երեխաների ցանկությունը բավարարելու համար ձեռց տարրված սկզբին կազմում էի գրքերի հատուկ ցուցակի և հանձնարարում կարդալ այդ գրքերը: Այն երկերը, որոնք գժվար էին ճարգում, ես աշխատում էի ձեռք բերել և կոլեկտիվի համար ընթերցել առանձին հատվածներ:

Իմ դասարանում աշակերտները սիրում էին կարդալ, նրանք ժամանակից շուտ սպառում էին իրենց համար նախատեսնված գրացուցակը: Ես հանձնարարել եմ նաև լրացուցիչ գրականություն: Սակայն մեր դպրոցական գրադարանները դեռևս կանոնավոր կերպով չեն գործում, գրքերի քանակին ու տեսակը շատ անբավարար է:

Դասը խանգարելու որոշ պատճառ ևս համարում էմ Հենց
դասատուներին իրենց:

Այն ուսուցիչները, որոնք չեն կարողանում դասը հետա-
քըրթիր գարձնել և ցրում են աշակերտների ուշագրությունը,
դասարանում ստեղծում ավելորդ շարժում և զրուց, որոշ դեպ-
քերում էլ նկատողությունների ժամանակ կորցնելով զգուշությու-
նը, չափի զգացումը, և մանկավարժական տակտը՝ վիրավորում
են աշակերտի ինքնասիրությունը, կոպտում նրանց, անհաճու-
րակումներ ու արտահայտություններ թույլ տալիս — այդ բոլո-
րով աշակերտի մեջ առաջ են բերում իրավացի դժբհություն և
զգումի իրենց հեղինակությունը: Իմ աշակերտներն ուսուցիչներից
մեկի մասին ինձ հայանեցին այնպիսի փաստեր, որ ես այլևս ոչ
մի արդարացում չեի կարող գտնել ուսուցչի համար: Նորանք
այդ փաստելուն ինձ հաղորդեցին այն ժամանակ, երբ նև դիտո-
ղություն էի անում դասարանի առաջ մի աշակերտի, որի մա-
սին ընկերներից մեկը գանգատվել էր, թե իրեն վատ խոսք են ա-
սել:

«Եթե այդ արտահայտությունը անկուլտուրականությունն է,
ապա ինչո՞ւ ուսուցիչն էլ կ գործածում» ասաց աշակերտ Լ—ն:
Ես զարմացա և հացարտեցի, որ ոչ մի ուսուցիչ իրեն թույլ չի
տա նման արտահայտություն: Սակայն ամբողջ դասարանը
պնդեց, որ այդ և նման արտահայտություններ թույլ է տվել
ուսուցիչ Վ—ն: Իմ հարցին, թե՝ ինչո՞ւ ինձ իրազեկ չեք պահել
այդ մասին, աշակերտները պատասխանեցին, որ «չենք ցան-
կացել ուսուցչին անհարմար վիճակի մեջ դնել»: Ես հավանու-
թյուն տվի նրանց որոշմանը, բայց չիշեցրի, որ նման խելացի
դաստողության տեր աշակերտը չպիտի թույլ տա վիրավորելու
ընկերոջը, թեկուզ կատակի ձեռվի: Ուսուցիչն իր պատիժն ստա-
ցավ զիրեկտորի և մանկ. խորհրդի կողմից:

Դասարանի ղեկավարը կարող է նույնիսկ ուսուցչի թերու-
թյունն ուղղել:

Արդեն նորկություն տարին է, որ իմ դասարանում ֆիզիկա և
ավանդում ուսուցիչ Հ—ն: Աշակերտները հաճախ բողոքում
էին, թե նրա հայացքը մեզ երկյուղ է ներշնչում ու դաս պատաս-
խանելիս շփոթեցնում: Աշակերտների բողոքը որոշ հիմք ուներ-
նորանք մինչև այդ «դաժան» հայացք ունցող ուսուցիչ չեն ունե-

ցել: Ուսումնասիրությունը ցուց տվեց, որ ընկ. Հ—ն խիստ քարկացկուտ է, նա չի համբերում, երբ աշակերտը դանդաղում է պատասխանեցնի, կամ շփոթվում է. նույ անմիջառավել ընդհատում է և շատ սրտնեղած դժգոհում աշակերտի պատասխանից ու գնահատում է «լատ»: Այդ խնդիրն ինձ որոշ ժամանակ զբաղեցրեց: Մտածում էի, թե ինչ ճանապարհով կարելի է վերացնել վոխսագրծ անվստահությունը, որ կար ուսուցչի և աշակերտների միջև: Փորձը ցուց է տվել, որ կարգապահ և աշխատասեր դասարանում ջղացին ուսուցիչն էլ հանգիստ է զգում իրեն, իսկ հանգիստ վիճակում դաժան հայցըն էլ որոշ շափով մեղմանում է: Ես աշակերտներին բացատրեցի: «Ծնկ. Հ—ն շատ բարի է, իզուր եք վախենում դաս ուստասխանելիս: Երբ նա բարկանում է: Ճեղ վրա կամ դժգոհում ճեր պատասխանից, չի նշանակում, թե ճեր մասին ընդհանրապես վատ կարծիք ունի: Ամեն ինչ կախված է ճեղնից: Եթե դուք լրիվ կատարեք նրա հանձնաւարությունները, միշտ պատրաստված դաք և դասերին ոչ մի առիթ չտաք կողմնակի դիտողությունների, ապա ուսուցիչը առիթ չի ունենա ճեղ վրա բարկանալու: Փորձեցիք և կտեսնեք, որ երկրություն ու շփոթվելը նրա դասերին այլևս չի լինի:

Որոշ ժամանակից հետո ընկ Հ—ն ինձ հայտնից, թե «անկեղծորեն ասած, ես շատ եմ սիրում ճեր դասարանը, ճեր աշակերտները լավ են աշխատում և կարգապահ են»: Ասացի «Նրանք էլ ճեր առարկան են շատ սիրում»: «Իսկապե՞ս» ասաց նա: «Կարող եք վստահել անկեղծությանս, — ասացի ես, — միայն խնդրում եմ մի քիչ ուրախ լինել դասարանում, մանավանդ թույլ աշակերտներին հարցնելիս, գուցէ նրանք բաշվում են ճեղնից և համարձակ շեն պատմում»: Նա խոսք տվեց այդպես լինել:

Հաջորդ անգամ դասերից հետո, երբ տուն էինք գնում, աշակերտները հայտնեցին ինձ իրենց տպավորությունը՝

— Այսօր առաջին անգամ ընկ. Հ—ն մեր դասարանում ժրապտաց, երկում է, որ բարի մարդ է, — ասաց մեկը:

Մի այլ առիթով ընկ Հ—ն հայտնից իր գոհունակությունը դասարանի վերաբերմամբ և ասաց. «Ճեր դասարանը տարեկերչին ինձ պարզերես կանի»:

Եվ իսկապես Յ-րդ քառորդի վերջում նա իմ դասարանում ոչ

միւ ավանոց գնահատական ունեցող շտկեց: Այդպես էլ նա փակց
ուսումնական տարին:

3

Ինչպես վեշտում ասացի, ուսման որակի բարձրացման հիմ-
նական պայմանը գիտակցական կարգապահության ամրացումն է:

Ուսման որակի բարձրացման համար հիմնականում հետևյալ
միջոցներն եմ զործագրել:

Հենց սկզբից մեծ տեղ եմ տվել սոցմրցման աշխատանքին:
Ամեն տարի դասարանն ունեցել է իր պայմանագիրը, որի մեջ մեծ
տեղ են բռնել ուսման որակի հարցերը: Բացի դասարանական պայ-
մանագրից ամեն մի աշակերտ ունեցել է իր սոցմրցման պայմանա-
գիրը: Այդ պայմանագիրը սիստեմատիկ կերպով ստուգվել և ար-
դյունքները մասսայականացվել են դասարանում: Առանձնապես
աշխուժ է եղել մրցումը պիտոներական օղակների միջև: Ամեն մի
օրակ աշխատել է, որ իր պիտոներներից ոչ մեկը «վատ» գնահատա-
կան չունենա: Լավագույն օղակները և անհատ պիտոներները պար-
ունաւորվել ու խրախուսանքի են արժանացրել (գրավոր շնորհակա-
լություն, նվիրատվություն, գովասանք պատի թերթում, կինո,
թատրոն ուղարկելը և այլն):

Եթե հիմնդության կամ այլ հարգելի պատճառով աշակերտը
չհայ է մնացել, նրա համար կազմակերպել եմ ընկերական օգ-
նություն: Երբեք հույս չեմ դրել մի ժամանակ տարածված այն մե-
թոդի վրա, որ «վատ» գնահատական ունեցող աշակերտը դասերից
չհայ մնա տվյալ առարկայի դասը պատրաստելու: Ինքս խիստ
դեմ եմ եղել այդ մեթոդին, որովհետև այդ ձեռվ փաստորեն պա-
տրծվում է և աշակերտը, և՝ ուսուցիչը: Ինքս իմ առարկայի գծով
ոչ մի աշակերտի հետ դասերից հետո չեմ պարապել: Ուսումնա-
կան կործ կազմակերպել եմ այնպես, որ աշակերտն ինքը պարա-
պի իմ տվյալ նյութերով և դասարանում, ընկերների առաջ պա-
տասխան տա:

Ես դասը տալիս եմ և բացատրում, թե ինչպես այն պիտի պատ-
րաստել տանը: Եմ աշակերտը գիտե, որ իր շպատասխանած դա-
սը նորից հարցնելու եմ, դրա համար էլ նա պարապում է բոլոր
դասերով հավասարապես: Նա գիտե, որ մինչև ինձ շբավարարի
ծրագրային ամբողջ նյութի յուրացմամբ չի փոխադրվի հաջորդ
դասարան:

Այսպես եմ սովորեցրել իմ դասարանի աշակերտներին:

Իմ աշակերտներից Թագևոսյան Ալբերտը բոլոր առարկաներից «գերազանց» էր սովորում, իսկ ոռւսերենից հետ էր մնում: Նա շատ էր կարդում Հայերեն գրքեր: Երբ Հարցնում էի, թե ինչու ոռւսերենը լավ չես սովորում, ոռւսերեն չես կարդում, նա պատասխանում էր.

— Երբ կարդում եմ ու չեմ հասկանում խիստ ձանձրանում եմ: Հասկանում եմ, որ շատ օգտավիտ է ոռւսաց լեզուն, բայց չգիտեմ ինչու ինձ թվում է, որ ուժերիցս վեր է այդ լեզվին տիրապետելը: Հաճախ որոշել եմ շարշարվել, որ կարդացածս հասկանամ, բայց որ կարդացածիցս բան չեմ ըմբռնել, թողել եմ այն:

Հաճախ երբ խոսք էր լինում ոռւս կլասիկների գործերի մասին, նա անմիջապես հարց էր տալիս. «Այդ գիրքը հայերեն թարգմանվա՞ծ է՞»:

Ես շարունակ հիշեցնում էի, որ նա ոռւսաց լեզուն սովորելուց ձեռք չպիտի քաշի: Խոսեցի ոռւսաց լեզվի դասատուի հետ, խնդրեցի, որ հատուկ ուշադրություն դարձնի նրա վրա, ամեն օր դաս հարցնի, խրախուսի և հատուկ հանձնարարություններ անի:

Նորից զրոյց ունեցա Ալբերտի հետ: Միասին նրանց տուն գրացինք և միասին կազմեցինք ոռւսաց լեզու սովորելու հատուկ պլան. բացատրեցի պարապելու մեթոդը: Այնուհետև շարունակ հետաքրքրվում էի, թե ինչպես է պարապում, ինչպես է պատրաստում դասերը: Դասարանում կան աշակերտներ, որոնք գիտեն ոռւսերեն խոսել, հանձնարարեցի նրանցից մեկին, որ Ալբերտի հետ դասերը միասին պատրաստեն և նրա հետ ավելի հաճախ ոռւսերեն խոսեն:

Թեև դանդաղ, բայց առաջադիմություն նկատվեց. նա անցյալ տարի ոռւսաց լեզվի բանավորից ստացավ «լավ» իսկ գրավորից՝ «մի ջակ»: Նա ինձ հայտնեց, որ որոշ շափով սկսել է հասկանալ կարդացածը, կարդում է «Պիոներսկայա պրավդա», իսկ տարեկերջում հայտնեց, որ արդեն ծրագրել է, թե ամառը ոռւսերեն ինչ գրքեր է կարդալու ես հավանություն տվի նրա ծրագրին: Այժմ այլևս «վատ» չի ստանում, ինքն էլ շարունակում է նախորդ տարում սկսած գործը: Նույնպիսի անհատական մոտեցում եմ ունեցել և մյուս աշակերտների նկատմամբ:

Գծագրության դասատուն մի ժամանակ շատ էր բողոքում, թե իմ դասարանում աշխատանք չեն կատարում: Ես առանց նախազգուշացման ներկա գտնվեցի գծագրության դասին: Ոմանք իս-

կապես տեսր, կարգին և այլ պարագաներ շէին բերել և ուզում էին օդովել մյուսներից; Իմ ներկայությունը ստիպեց նրանց տեղից չչարժվել: Դասատուն նշեց, որ նրանք չեն աշխատում, որը և արձանագրվեց օրագրում: Դասը վերջանալուց հետո ուսուցչի ներկայությամբ ես նրանց նկատողություն արեցի, ստիպեցի խոսք տալ, որ իրեք այլիս անպատճառատ չեն գա դասի և հայտարարեցի, որ այսուհետեւ ով անպատճառատ կգա, անմիջապես կհեռացվի դասից և նրա հարցը այլ կերպ կբննվի: Ես նրանց ծնողներին իրազեկ դարձրի գեպի մասին և պահանջեցի, որ ամեն օր, ըստ դասատախտակի ստուգեն նրանց պայտատակները և հետո ուղարկն դպրոց: Դասից հետո ես խոսեցի գծագրության դասատուի հետ: Եհնք համաձայնության եկանք մի քանի հարցերի վերաբեր-մաժը՝ գծագրության դասերն ավելի հետաքրքր դարձնելու իմաս-տուի:

Հետևյալ դասին դարձյալ ներկա եղաւ: Բոլորը պատրաստ էին ևկել: Այսպես շարունակվեց մինչև տարեվերջը: 32 աշակերտից 23-ը գծագրությունից «գերազանց» գնահատականով փակեցին տա-րին: Նրանց տեսրերը ցուցադրվեցին դպրոցական ցուցահանդե-սում:

Ուսման որակի բարձրացման հիմնական պայմաններից մեկն չէ աշակերտին ինքնուրույն աշխատանքի վարժեցնելն է:

Ամեն անգամ չի կարելի վազել երեխայի ետևից, թե ինչը չես կարողացել լուծել բեր օգնեմ, կամ այսինչ ժամին արի քեզ հետ սպարապեմ: Նման վերաբերմունքն անդամալուծում է, երեխային: Եաւ ամեն կողմից օգնություն ստանալու ակնկալությամբ ծովա-նում է, փոքր գծվարության դեպքում իսկ չի փորձում իր ուժերը, անվատահ է դառնում և զրկվում ինքնուրույնությունից: Պետք է ամենայն խստությամբ պահանջել և հետեւ, որ երեխան լավ լսի նոր դասը, տնային հանձնարարությունները կատարի միանգամայն պարզ ու որոշակի:

Տարեսկզբից աշակերտներին պետք է բացատրել ինքնուրույն աշխատելու մեթոդը, կոնսպեկտ կազմելու ձեր և այլն: Դրանից հետո աշակերտներից շատ քերը դժվարությունների կհանդի-պեն:

4.

Սովորական դպրոցը և ընտանիքը սերտ կապ ունեն միմյանց հետ:

Երեխայի կոմոնիստական դաստիարակությունը լավ հիմքն որի վրա է դրված լինում այն դպրոցում և դասարանում, որտեղ ընտանեկան և դպրոցական դաստիարակության մեջողները չեն հակասում միմյանց, չեն հակադրվում, այլ լրացնում են իրար:

Ուսուցչական աշխատանքիս հենց առաջին տարիներից հսկարողացա սերտ կապ ստեղծել ծնողների հետ և միասնական աշխատանքի միջոցով ինձ հաջողվեց լավ հիմքերի վրա զնել դասութանք աշխատանքները:

Ծնողների հետ կապ պահպանելու համար, որպես միջոց օգտագործել հմ:

1. Օրագիրը.
2. Ծնողական ժողովները.
3. Նամակագրությունը*.
4. Ծնային այցելությունները.
5. Ծնողական կոմիտեի կազմակերպումը.
6. Հեռախոսը և այլն:

Ծնողական ժողովներում ոչ միայն քննել ենք քառորդային առաջադիմության արդյունքները, կարգապահության հարցերը, այլև մեթոդական ու մանկավարժական այլ հարցեր: Կազմակերպել եմ հետևյալ զեկուցումները.

ա) Կոմոնիստական և բուրժուական դաստիարակության տարբերությունը:

բ) Երեխայի տնային աշխատանքի ու հանգստի կազմակերպումը:

գ) Երեխայի կուլտուրական վարժումքի խնդիրներն ու ծնողների դերը:

դ) Երեխայի տարիքային առանձնահատկությունները:

Բացի այս, փորձի փոխանակման կարգով ժողովներում դրել եմ որոշ ծնողների զեկուցումներ իրենց երեխաների դաստիարակության մասին: Մասսայականացրել եմ «Պրավդա»-ի հետեւյալ հոդվածները՝

ա) «Սովետական հայրը»

բ) «Սովետական մայրը»

գ) «Սոցիալիզմի երկրի քաղաքացին» և այլն:

Այս զեկուցումների նպատակն է եղել ծնողների մեջ մանկա-

վարժական պրոպագանդա մղել, նրանց կողմից միատեսակ, ընդհանուր և, որ ամենից կարևորն է, ճիշտ վերաբերմունք ստեղծել երեխաների պատիհաբակության հարցերում:

Հաջախ ծնողները խորհուրդ են հարցնում, թե ինչպե՞ս վերացնել երեխայի կապրիզները, ինչպե՞ս վարվել, երբ միծ երեխան չի լսում տատիկին, որին բարկացնում է շարունակ, չի օգնում փոքր եղբորը և այլն:

Աշխատում էի, որքան ներում էին ուժերս, օգնել նրանց այդ գործում:

Մի անգամ աշակերտուհի Մովսիսյան Վիլենայի մայրը եկավ գոլրոց հատկապես նրա համար, որ հայտնի թե Վիլենան չի լսում տատիկին, շարունակ բարկացնում է խեղճ պառավին, բոլորովին ին օգնում փոքր եղբորը գասերը պատրաստելու և այլն: Ես խոսացա օգնել նրան: Եվ մի անգամ, երբ արդեն վերջացել էր օղակային հավաքույթը, որտեղ ինձ խնդրել էին զրուց անցկացնել, ես հետաքրքրվեցի, թե տանն ով ինչովէ օգնում ծնողներին: Ամեն մեկը թվեց այն, ինչ որ ինքը արել է, իսկ Մովսիսյանը որ օղակալարն էր, լուսաւ էր: Նա դեռ չդիտեր, որ իր մասին ես գանգատ եմ լսել: Ես դիմեցի նրան, նա ասաց, որ օգնում է, ինչով որ կարող է:

Նա դպրոցում գերազանցիկ և չափազանց դիսցիպլինար աշակերտուհի է: Ծնողի գանգատն ինձ նույնիսկ զարմացրեց: Բայց քանի որ հաստատ փաստեր էր հաղորդվել ինձ, ես չէի կարող չհավատալ: Այդ օրը ես նրան գլաւ շտվի: Միայն հայտարարեցի, որ հաջորդ անգամ այցելելու հմ ձեր օղակի անդամների տները և հատկապես հետաքրքրվելու հմ, թե նրանք ինչպես են օգնում ծնողներին, որքանով են լսում միծերին, օգնում փոքր եղբայրներին կամ քույրերին դաս սովորելիս և այլն: Լավ պիոները նա է, ով ու միայն լավ է սովորում, այլև հարգում է միծերին, օգնում ուրիշներին, օգնում ծնողներին տնային գործերում:

Հաջորդ անգամ հանդիպելու ժամանակ Մովսիսյանի ծնողն ինձ շնորհակալություն հայտնեց և ասաց՝ «Չեք կարող երեսակացնել, թե ինչպես է փոխվել Վիլենան, կարծես էլ նախկինը Աինիօ:

Երբ ես գնացի նրանց տուն, բոլորը գոհունակություն արտահայտեցին Վիլենայի վերաբերմամբ: Զգացվում էր, որ նա ներքին

Հրճվանք էր ապրում, բայց երկար շմասնակցեց մեր զրուցին և ամաչելուց դուրս թռավ սենյակից:

Այսպիսի հարազատությունը դպրոցի և ընտանիքի, դաստիարակի և ծնողի միջև ինձ լայն հնարավորություն է ավել ծնողներին մասնակցեց գարձնելու իմ դասարանում տարվելիք մի շարք աշխատանքների, ինչպես օրինակ՝ Եքսկուրսիաների, ծնողների փոխայցելությունների, տոնածառի կազմակերպման, կինո նկարի դիման և այլն:

5.

Երեխաների կոմունիստական աշխարհայացքի մշտկման, քաղաքական մտահորիզոնի լայնացման, բոլցերիկան սկզբունքայնության, ճշմարտացի լինելու և կամքի դաստիարակության գործում հսկայական նշանակություն են ունեցել կին դիտումները, զրուցները, քաղաքական հոդվածների և մարքսիզմի կլասիկների աշխատություններից մատչելի հոդվածների ընթերցանությունը, առաջնորդների ու մեր երկրի հերոսների կյանքի ու գործումնեության ուսումնասիրությունը, գեղարվեստական երկերի ընթերցանությունը և այլն:

Կոլեկտիվ կերպով դիտել ենք հետևայլ նկարները՝ «Էենինը Հոկտեմբերին», «Էենինը 18 թվական», «Սահմանի վրա», «Շորոս», «Ստեփան Ռազին», «Պուտաշև», «Ջանգեզուր», «Պետրոս առաջին» և այլն:

Դիտումներից հետո կազմակերպել եմ մտքերի փոխանակություն և կատարել եմ ամփոփում: Երեխաները հաճախ հետաքրքիր հարցեր էին տալիս: Օգտագործելով պատմական փաստերը՝ պատասխանում էին նրանց հարցերին: Աշակերտներին հարցնում էին նկարի իդեալան և գեղարվեստական արժեքների մասին, նրանց մեջ զարգացնում քննադատական մոտեցում երեխույթների նկատմամբ: Որոշ գեպքերում պահանջել եմ շարադրություն զրել դիտած նկարի կամ այցելած թանգարանի, ցուցահանդեսից ստացած տպագործությունների մասին: Այդ շարադրությունների մեջ երեխաները դրամորել են խորը հուզականություն, պատրիոտիզմ և անսահման սեր դեպի հերոսական ժողովուրդները, պրոլետարիատի ուսուցչիցիցին առաջնորդները: Անմիջապես զգացվում է, որ երեխաներն ապրել են հերոսի ուրախությունը, ոգևորվել նրա սիրագործություններով, խորը վիշտ ապրել նրա մահով և այլն:

Հսկայական նշանակություն են ոմեցել՝ «Զապահ», «Մայրը», «Ծննդի էր կոփվում պողպատը», «Սերգեյ Լազո», «Կոմիսար Պոժարսկին», «Գարիբալդի», «Սուվորով», «Կուտուզով» և այլ գրքերի ընթերցանությունը, կամ առանձին հավաքությունների ժամանակ իմ ըստուցները — մեր և այլ երկրների ականավոր ուսուցիչներ մարտիկների կյանքի մասին։ Նրանք երեխանների մեջ զարգացնում են պատրիոտիզմ, ինտերնացիոնալիզմ, ինչպես և ազնիվ, ճշմարտացի լինելու, հաստատում կամք ունենալու և սկզբունքային լինելու հատկություններ։ Իմ աշխատանքի ընթացքում ես ականատես եմ եղել երեխանների մեջ այդ գծերի գրսնորմանը։ Նրանք բոլորն էլ «ՄՕՊՌ»-ի անդամ են, մեծ ոգևորությամբ նվերներ են ուղարկում Տա-Բառին, որը շին զոհված ուսուցիչների զավակ է, ապրում է Մոսկվայում և որի շեփությունը վերցրել է մեր գպրոցի «ՄՕՊՌ»-ի կազմակերպությունը։

Դասարանը նվեր է ուղարկել սպիտակ ֆինների դեմ կռվող հերոս մարտիկներին։ Ընկ Ստալինի ծննդյան 60-ամյակի կազմակցությամբ շոկատը կազմեց հատուկ ալբոմ, որը դրվեց ցուցանդեսում։

Հիակատար կերպով գրսնորմեց երեխանների ստեղծագործական աշխատանքը ընկ։ Ստալինի 60-ամյակին նվիրված հավաքան աշխատանքը ընկ։ Ստալինի ծննդյակին նվիրված հավաքանը աշխատանքը ընկ։ Երեխանների մեջ զգացվում էր հայրենասիրական խոր զգացմունք և նվիրվածություն մեր հայրենիքի Մեծ Առաջնորդի նկատմամբ։

Կոմերիտմիության շարքերն ընդունվելու համար աշակերտներից նախապատրաստել եմ 11 հոգու, կոմերիտական դառնալ նըրանց երազանքն է եղել։ Նրանց բոլորին էլ ես երաշխավորել եմ։ Այս հանգամանքն ավելի սերտ հարաբերություն է ստեղծել իմ և աշակերտների միջև։ Նրանք ամեն կերպ աշխատում են լավ սովորել, կարգապահ լինել։

Մի ժամանակ իմ դասարանում նկատմեց մի մատուցություն։ Աշակերտները թաքցնում էին իրենց լիներների բացերը, չեին քննադատում։ Դա հասցնում էր այն քանին, որ դասարանական կոլեկտիվի աշխատանքի մեջ նկատվող թերությունները գնացով շատանում էին, վատերի թիվն ավելանում, գանգատները շատանում։ Երբ ժողովում քննվում էր այդ հարցը, սկզ-

բով ոչ ոք չէր ուզում ելույթ տևնենալ, կարծես ոչ ոք մեղավոր չէր գասարանի թերությունների համար:

Այդ ժողովում քննության դրի սոցմբցման պայմանագրերի կատարման ընթացքը և ընթերցմեց այն նամակը, որ իմ գասարանը պետք է ուղարկեր Մեղուու դպրոցի 7-րդ գասարանին, որի հետ կնքված էր պայմանագիրը:

Ստուգումը ցուց տվեց, որ կարգապահության և որակի վերաբերյալ կետերը լավ չեն կատարվում, «վատ» գնահատական ստացողների թիվն զգալի չափ է ընդունել, դանդատները շատացել են: Այդ թերությունները վերացնելու գործում ինձ բախական օգնեց աշակերտական կազմակերպության նոր կամունադրությունը, որն իրավունք է տալիս աշակերտի հարցը քննել դատարանական ժողովում և համապատասխան կազմակերպչական որոշում ընդունել: Ես բացատրեցի, որ ԿԾԵ մենք այսօր կոնկրետ կերպով չնշշշենք բացերը, մեղավորներին, ասդա մենք չենք կարող միցումից պատփով դուրս գալ: Պետք է խիստ քննադատել ընկերոջը, նշել նրա թերությունները, որպեսզի նա վերացնի դրանք: Թերություններ ծածկելը վճառ է ոչ միայն ընդհանուր գործիքն, այլև հենց նույն ընկերոջը, որովհետեւ թերությունները դառնում են սովորությ և հասցնում այնպիսի վատ հետևանքների, որոնց համար նա մի օր կարող է տույժ ստանալ կամ հեռացվել դպրոցից: Օքինակ բերեցի բոլշևիկյան պարտիացին, որն իր շարքերում լայնորեն ծավալում է քննադատությունը և նշում թերությունները, որպեսզի հայտաբերվին աշխատանքը կազմակերպողներն ու պատժվեն, և միշտ բարձր լինի պարտիայի շարքերում բոլշևիկյան կարգապահությունը:

Դրանից հետո աշակերտները մեկ-մեկ սկսեցին ելույթ ունենալ և կոնկրետ օրինակներ բերելով մեղաղղեցին այս կամ այն ընկերոջը, նշեցին նրա բացերը: Դասարանը «վատ» սովորություններին և անկարգության մեջ աշքի ընկածներին նկատողություն արեց և սկահանչեց, որ նրանք կարծ ժամանակամիջոցում վերացնեն, իրենց թերությունները: Դասարանը հանձնարարեց կազմակերպչն և հերթապահին ուժիւղացնել հակողությունը նրանց նըկատմամբ և ամեն օր, դասերից հետո դասարանի դրության մասին զեկուցել դասղեկին: Դասարանը որոշեց նաև, որ դասա-

բանի այդ որոշումը ճշտողեն չկատարող աշակերտների հարցը կփոխադրվի աշկոմ և դիրքեցիա, որպեսզի աշդաբիաներին ավելի խստ պատի ենթարկեն: Դասարանական այդ ժողովն զգալի նշանակություն ունեցավ՝ թերություններ ունեցողները հավաքեցին իրենց: Թերթը նույնպես օգնեց ինքնաքննադատության ծավալմանը:

Այժմ իմ գասարանի աշակերտների մեջ կա համերաշխ, ընկերական սպայկա և մտերմություն:

Հաճախ է պատահել, որ ժողովից, հավաքութից կամ կինոյից հետո անմիջապես չենք բաժանվել. աշակերտների որոշ խմբի հետ զրուցելով դուրս ենք եկել զրուանքի: Այդպիսի դեպքերում աշակերտները հնարատվորություն են ունենում ավելի ինտիմ զրուցներ ունենալու, կամ իրենց հետաքրքրութ կողմնակի հաղցերի մասին որոշակի պատասխան ստանալու: Եվ ես սիրով լսել իմ նրանց, բամբարարել նրանց հարցամիջությունը:

Այս միջոցներով երեխաներն ավելի բարգմափողմանիրեն են Քանաշել ինձ, ես էլ նրանց, ու ավելի է ամրապնդվել մեր մրտերմությունն ու փոխադարձ վստահությունը:

Թի մտերմության թե խստության մեջ ուսուցիչը միշտ պիտի զգա, որ ինքն ուսուցիչ է: Նա չպետք է անցնի ուսուցչի և աշակերտի միջև պահպանվելիք նորմալ փոխհարաբերությունների սահմանը, չինչ մինչև աշակերտի մակարդակը կամ կորի նըրանցից: Այդ սահմանի միշտ պահպանումը բավագույն միջոց է ուսուցիչ-դաստիարակի հեղինակության բարձրացման համար:

6.

Դասարանի ղեկավարը պետք է տերու կապ հաստատի մյուս ուսուցիչների հետ, որովհետև ամեն մի ուսուցիչ միաժամանակ և դաստիարակ է: Աշակերտը դաստիարակվուած է քուոր դասերի ընթացքում: Քանի որ նա կապ ունի և մյուս ուսուցիչների հետ, ուստի անհրաժեշտ է ընդհանուր վորդի հիման սլուա, մշակել միասնական մոռեցուած այս կամ այն աշակերտի, այս կամ այն երեսովի նկատմամբ: Այլապես մի ուսուցչի աշխատանքը կարող է խախտել մյուսը: Ես սիստեմատիկաբար լսել եմ իմ դասարանում դասավանդող ուսուցիչների դասերը, հրավիրել եմ առանձին խորհրդակցություն և քննել այս կամ այն հարցը կապված

Դասարակի հետ, աշակերտի հետ, որոշ մեթոդական-դաստիարակ-չական հարցերի վերաբերյալ կազմակերպիլ եմ մտքերի փոխա-նակություն, ինֆորմացիա եմ տվել դասարանիս աշակերտների մասին և նրանց տեղյակ եմ պահել երեխաների թերությունների, բնավորության գծերի, ընտանեական միջավայրի մասին և այլն:

Միասնական աշխատանքով վերացրել ենք այս կամ այն թե-րությունը թե առանձին ուսուցիչների և թե աշակերտների: Ան-կասկած, ինձ հանձնված դասարանի ձեռք բերած հաջողություն-ները հանդիսանում են տվյալ դասարանում դասավանդող բոլոր ուսուցիչների միասնական աշխատանքի և գորոցի դիրեկցիայի տմենայա օդության ու ղեկավարության արդյունքը:

Դասարանի ղեկավարի ղերը մեծ է: Իրավացի է ասված, որ պատուիարակը մանկական հոգու ճարտարապետն է»: Նա այնպի-սի վարպետ է, որ, եթե լավ չգիտի Փիզիոլոգիան, պատմովյունը, զրականությունը, մանկավարժությունը և գիտության բոլոր ճյու-ղերը, պետք է լավ իմանալ զոլոնե նիրանց հիմունքները և կարմոր խնդիրները: Զիա մի այլ մասնադիտություն, որ այնքան բազմա-կողմանի ու խոր գիտելիքներ պահանջի մասնագետից, որքան դաստիարակի աշխատանքը: Դասղեկը ուղղություն է տարիս ա-նող մանկան մտավոր ու Փիզիկական զարգացմանը, որն անընդ-հատ փոփոխվում է և իր հերթին բնականաբար ստիպում դատե-կին՝ շաբանակ փոփոխվել, շարունակ ստեղծագործական բարդ պրոցես կատարել:

Դասղեկի հաջող աշխատանքը կրթալած է իր անձնական օ-րինագից: Առ պիտի իր մեջ կինություննի այն բոլոր հատիւ-թյունները, որ ուղարկ է ամբացնել երեխայի մեջ (լինել ազնիվ, հշմարիտ, ճշտապահ, սկզբունքային, ունինալ կայուն կամք, վճռականություն և այլն):

Կոմոմիստական դաստիարակությունը կարող է լրիվ ապա-հրվել միայն այն ուսուցիչը, որը լավ է տիրապետում Մարքո-լինինյան ուսմունքին:

Լավ դաստիարակությունը կախված է խելացի ու լավ մշակ-ված աշխատանքային սկզբանից, որ բխում է դաստիարակության ընդհանուր խնդիրներից և անհատ աշակերտին բազմակողմանի քանաշելուց: Այդ պլանի յուրաքանչյուր կիտը պետք է ունենալ ու-

բոշակի նպատակադրում և համեմ առնի կոմիտես պայմանները:

Եսկ այս բոլորի նախապայմանն այն է, որ ուսուցիչը սիրի ժանկավարժական աշխատավարք, սիրի երեխաներին, նրանցով ապրի ու նրանց աճմամբ անկեղծորեն ուրախանա:

Ավելի ծրագրված աշխատանք տանելու համար ես շարունակ կազմել եմ դաստիարակչական աշխատանքի պլան ըստ քառորդ-ների և ըստ շաբաթների: Այդ ինձ հնարավորություն է տվել խուսափել պատահականություններից և դաստիարակչական աշխատանքի հիմքում դնել որոշակի նպատակ:

Ահա իմ դաստի աշխատանքի քառորդային պլաններից մի հմտաւ:

ԴԱՍՏԻԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆ

8-րդ ա. դասարանի 3-րդ քառ. 1940—41 ուս. ա.

1. Սմեն օր լսել դասարանական կազմակերպչի ինֆորմացիան օրվա հերթապահության և դաստիարակչական աշխատանքի պլանին:

2. Դասարանը նոր աշակերտներ բերելու կառապահ աշակերտների տեղերի նոր դասավորություն և ունենալ զրույց միասնական կոնտակտ աշխատանքի և ընկերականության մասին:

3. Ամիսը երկու անգամ լսել ֆիզկուլտուրայի դասը:

4. Դասարանական ժողովներին մասնակից դարձնել նաև դասարանի տառուցիչներին:

5. Սիստեմատիկաբար լսել դասարանիս ուսուցիչների հագրդումները, դիտողությունները դասարանի և առանձին աշակերտների մասին: Մշակել միջոցառումներ նկատված թերությունները վերացնելու համար:

6. Ամիսը երկու անգամ լսել աշխարհապետության դասը:

7. Եպքաթվա 6-րդ օրը հավաքել օրագրերը և ստուգել:

8. Պիոներական ջոկատի հետ կապված հարցերը մշակել Պ. ջոկատավարի հետ միասին: և կատարելիս մշտական օպնություն ցույց տալ նրան:

9. Ելցելել Պ. Աղայանի հոբելյանական ցուցահանդեսը՝ այցելել նաև Վ. Սովորենյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը:

10. Սիստեմատիկաբար կատարել ամփոփումներ դասարանական մատյանում:

11. Ունենալ հատուկ տեսք, որտեղ գրանցել դասարանի առանձին աշակերտների, ինչպես և դասարանի հետ կապված դիտությունները, ներությունները վերացնելու համար ձեռք առնը-ված միջոցառումները և այլն:

12. 17.—5(II ա) Հրտավերել դասարանական ժողով, որտեղ քննիկ Յ-րդ քառորդի առաջին ամսվա ակտերին, առաջադիմությունները, մշակել միջոցառումները թերությունները վերացնելու համար:

բ) Ունենալ զրույց 4 և ավելի առարկայից գտատ գնահատական ունեցող աշակերտների հետ.

1. Խաչատրյան Գրիշա
2. Աբրահամյան Տանիկ
3. Հովհաննիսյան Աստուած
4. Զակրյան Արմիկ
5. Աղիզրեկյան Արտուշ
6. Արամյան Լևոն

գ) Զրույց ունենալ նաև նրանց ծնողների հետ, մշակել նրանց տնային աշխատանքների սեփմը, և միջոցառումներ նրանց առաջադիմությունը բարձրացնելու համար:

13. Սիստեմատիկաբար լսել գծագրության դասերը, օգնել դասատու ընկ. Վ. Պողոսյանին դասի ժամանակ ապահովելու անհրաժեշտ կարգապահությունը և պարտավորեցնել դրեխաներին դասի դաշտավայրությունը պրենական պիտույքներով (հաճախակի ստուգել):

14. 20/II—Դասարանով այցելել ուսուցիչոն թանգարանը,

15. 15/II— Այցելել ավերակառուցվող Մոսկվան» ցուցահանդեսը.

16. 19/II— Դասարանի աշակերտների հետ միասին դիտել «Սովորով» կինոնկարը:

17. 22/II— Աշակերտների համար կազմակերպել զրույց Կարմիր Բանակի 23-րդ տարեդարձի առթիվ:

18. 28/II Դասարանական ժողովում քննության առնել դասարանական սոցմրցման պայմանագրի կատարման ընթացքը:

19. Հետևել, որպեսզի մինչև 20/II լուս տեսնի դաս. պատի թերթը:

20. 10/II— Հրավիրել դաս. ժողով և քննության առնել 3-րդ քառորդի 2-րդ ամսվա արդյունքները:

21. 18/II— և 13/III հրավիրեն ծնողական ժողով,

22. 4/II— լսել մեթոդիկայի դասը:

23. 25/II— Ունենալ գրուց միջազգային դրության մասին:

24. 7/II և 7/III— Հրավիրել դաս. կոմերիտականների առանձին փորձակցություն (ԿԵՄ Կոմիտեի հետ համաձայնացնելով), որուել լսել կազմակերպիչի ինֆորմացիան և գրուց կոմերիտականների ավանդարդացին դերի մասին:

25. 26/II— Ունենալ դաս. ժողով և ամփոփել քառորդի արդյունքները:

26. 26/II և 15/III— Հրավիրել դասարանի ուսուցիչների խորհրդակցություն:



ՎՖ 9076. Պատվեր 821. Տիրաժ 1.000 2 տպագրական

մամուկ, մամուկում 37.000 տառանիշ

Ստորագրված է տպագրության 1/IX—1941 թ.


Հայկական ՍՍՌ ժողովության կից թերթերի և ամսագրերի
տպարան— Երևան.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002123

ԳՐԱԾ 1 ՈՒՆՔ.



104.

695

Н. КАРАПЕТЯН.
МОИ ОПЫТ
ПО ВОСПИТАТЕЛЬНОЙ РАБОТЕ

(На армянском языке).

Прод.